սաղէմ. մեք հրամայեցաք, թէ յորժամ դարձցիս յԵրուսաղէմայ՝ նայ առ մեզ եկն. զի գրել եմք որ այն ասացեալ Գրիգորն գայցէ, որ ձեզ դատաստան առնեմք[1]: Իսկ Տէր Յոհանէս դարձաւ յԵրուսաղէմայ և եկն առ մեզ, և կացաւ բազում ժամանակ ի մեր դուռս. մինչև եհաս առ մեզ մեր Նվիրակին գիրն, թէ զայս ինչ արար հետ մեզ, և ինքն չէ ի գալ։ Մեք ծանեաք զայդ Գրիգոր չեպիսկոպոսիդ զամբարտաւանութիւնն, որ մեր սուրբ աթոռոյս գլուխ է վերուցել, և ըստ արժանաց իւրոց պատժեցաք զինք, ըստ ասացելոյն, եթէ զչարսն չարաւ կորուսցէ, և զայգին տացէ այլոց մըշակաց՝ որ արասցէ զկամս Նորա. նոյնպէս և մեք արաք[2]. և վերըստին հաստատեցաք զՏէր Յոհանէսդ ձեզ եպիսկոպոս, որպէս մեր նախնին հաստատել էր. և պարգևեցաք զԼո

իւր վիճակովն, և զԼուցկայն, և զայլ ամենայն թէմն զոր վերոյ յիշեալ ենք, Տէր Յոհանէսիդ թէմ և վիճակ, աթոռ և հանգստեան տեղի։ Եւ առաքեցաք գրաւորական աւրհնութեամբս մերով գալ առ ձեզ. և առաքելաբար շրջեսցի ի միջի ձերում, վարդապետել, խրատել և ուսուցանել յաւրէնս և ի պատուիրանս Տեառն, կալ անարատութեամբ ի տուէ և ի գիշերի. տալով զանձն աւրինակ բարեաց ձեզ ամենեցուն. ինքն արասցէ և ըզձեզ ուսուսցէ սրբութեամբ արդարութեամբ, երկիւղիւ, սիրովն առ Աստուած և առ ընկերս. եղբայրսիրութեամբ աղքատսիրութեամբ, ողորմածութեամբ և աղաւթիւք, լինել այցելու որբոց և այրեաց, և ամենայն կարօտելոց կարեկից, սիրովն Քրիստոսի։ Կոչեսցէ զարժանաւորսն և ըզվկաեալսն ի կարգ և յաստիճան կեսարկավագութեան, սարկավագութեան և քահանայութեան։ Կալցի և հրամանավս մեր ի վերա ձեր իշխանութիւն առաքելական, կապել և արձակել յերկինս և յերկրի. զմեղուցեալսն և զապըստամբեալսն յաւրինացն Աստուծոյ և ի կանոնաց սըրբոց հարցն՝ կշտամբել և յանդիմանել, և ըզզղջացեալսն ընդունել ապաշխարութեամբ։ Որով և դուք ամենեքեան առ ի դմանէ հովեալք և արածեալքն ի վայրս դալարոջ առաքինութեան և ի ջուր հանգըստեան պատուիրանացն Աստուծոյ, զաստուածապատիւ և զառաքելաշնորհ յոյժ սրբազան արքեպիսկոպոսդ ձեր զՏէր Յոհանէսդ, զսիրելի և զհաւատարիմ որդիս մեր՝ մեծավ պատվով և յոյժ սիրով ընկալարուք, որպէս զհրեշտակ Աստուծոյ և որպէս զառաքելական այր։ Զի հրամանավս մեր դա՝ Տէր Յոհանէս՝ է ձեզ եպիսկոպոս. որպէս մեր նախնին հաստատեաց, և որպէս նա պարգևեաց յայնժամ, նոյնպէս և մեք հաստատեցաք այժմն, և է և եղիցի։ Դուք ամենեքեան սիրելի որդիք մեր ի Քրիստոս, ամենայն հոգևորական խրատս դորա՝ որ ի շահ և յաւգուտ է ոգւոց ձերոց, հնազանդութեամբ ունկնդիր լերուք։

1. Յայտնի ուրեմն որ երկու եպիսկոպոսքն էին և նոր՝ վիճէին ի վերայ աթոռոյն, և ժողովուրդն այլ երկպառակէր։

2. Հետագրգիռ է ըսածն. ինչ կերպով արդեաք պատժեց՝ այդ ամբարտաւան և անհնազանդ եպիսկոպոսը, և ինչպէս զչարն չարաւ կորոյս։